ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«19» 04 2017թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-65

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 12-14 որոշումները:

Առդիր 4 թերթ

Համայնքի ղեկավար ---------- Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» ապրիլ 2017 թ. N 12-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «ՏԻՄ» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Մեծ Պարնի համայնքի ավագանին

որոշեց

Մեծ Պարնի համայնքի ղեկավարի հաղորդումը 2017թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման վերաբերյալ՝ ընդունել ի գիտություն:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արզումանյան Արամայիս			
Գասպյան Կարեն			
Ղոչիկյան Լուսինե			
Նազարյան Արամ			
Զոթյան Անդրանիկ			
Զոթյան Բաբկեն			
Սանթրոսյան Գրետա			

Համայնքի ղեկավարի՝ ----------Գ. Պալյան

20 17 թ. ապրիլի 14
գ. Մեծ Պարնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» ապրիլ 2017 թ. N 13-Ա

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-075-0021-0009 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.01 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 14.02.2017թ. թիվ -13 դրական եզրակացությունը , համայնքի ավագանին

Որոշում է

1. Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.02 հա հողերից 06-075-0021-0009 ծածկագրից առանձնացված 0.01 հա բնակավայրերի կատեգորիայի նշանակության հողատեսքի նպատակային նշանակությունը, բջջային հեռախոսակայան կառուցելու նպատակով, փոխադրել էներգետիկայի, կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերի նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության:
2. Առաջարկել Համայնքի ղեկավար Գ. Պալյանին

1) ապահովել իրավունքի պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետ. կոմիտեի կողմից

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Չեռնպահ
Արզումանյան Արամայիս			
Գասոյան Կարեն			
Ղոչիկյան Լուսինե			
Նազարյան Արամ			
Զոթյան Անդրանիկ			
Զոթյան Բաբկեն			
Սանթրոսյան Գրետա			

Համայնքի ղեկավարի ----------Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» ապրիլ 2017 թ. N 14-Ա

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ս Ո Ց Ի Ա Լ Ա Պ Ե Ս Ա Ն Ա Պ Ա Հ Ո Վ Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ն Ե Ր Ի Ն Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Օ Գ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ա Տ Կ Ա Ց Ն Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արզումանյան Արամայիս			
Գասոյան Կարեն			
Ղոչիկյան Լուսինե			
Նազարյան Արամ			
Զոթյան Անդրանիկ			
Զոթյան Բաբկեն			
Սանթրոսյան Գրետա			

Համայնքի ղեկավարի _____Գ. Պալյան

20 17 թ. ապրիլի 14
գ. Մեծ Պարնի

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ավագանու
2017 թվականի ապրիլի 14-ի N 14-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՑՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Կարեն Գևորգի Ջոթյանին 50000 /հիսուն հազար / դրամ սոց. օգնություն
2. Ասյա Վարդի Հարությունյանին 30000 / երեսուն հազար/ դրամ սոց. օգնություն
3. Արմեն Հովիկի Ղազարյանին 35000 / երեսուն հինգ հազար / դրամ ուսման վարձ

Ընդամենը 115000 / հարյուր տասնհինգ հազար / դրամ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ԳԱՍՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 06801098 *